ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

09 հոկտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 28 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Սոկրատ Հովսեփյանը, Արթուր Մկրտչյանը, Սեդրակ Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Հրայր Հակոբջանյան, Հրաչյա Հովհաննիսյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Արսեն Եփրեմյան, Անահիտ Խաչատրյան, Խորեն Հովակիմյան, Նարեկ Գալստյան, Նունե Հովհաննիսյան, Գևորգ Զաքարյան, Հովհաննես Հովհաննիսյան, Գարեգին Հարությունյան, Սերժիկ Բաբայան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար /1.1-1/՝ Գոռ Նազարյանը

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի 2024 թվականի հոկտեմբերի 09-ի երկրորդ (հերթական) նիստի **օրակարգը՝**

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐՈՍ ՀՄԱՅԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.4. ԱՐԵՎԻԿ ԱՐԹՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

1.5. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ ԵՐԿՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՊԱՆԹԵՈՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,01087 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ <<ԲԵՐՆԱՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 13.09.2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N:5/2000 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ <<ԲԵՐՆԱՐ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 07.05.2004 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N:5/2004 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 194-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

1.14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 262-Ա /

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի թիվ 269-Ն որոշումը, Արարատի մարզպետի աշխատակազմի և Արտաշատ համայնքի միջև 2024 թվականի մայիսի 3-ին կնքված թիվ 24/Ա-1 և մայիսի 14-ին կնքված թիվ 24/ՏՄ-1 պայմանագրերը, Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1)28.50.00 գործառական դասակարգման /օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ/ 900415003020 գանձապետական եկամտային հաշիվը ավելացնել 6 692 800 /վեց միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր /ՀՀ դրամով.

2)09.01.01.51 գործառական դասակարգման /նախադպրոցական ուսուցում / «Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի «Լուսնթագ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 624 000 /վեց հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամով.

3)09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Վերին Արտաշատ գյուղի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 1 537 900 /մեկ միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար ինը հարյուր / ՀՀ դրամով.

4)09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 3152 300 /երեք միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր / ՀՀ դրամով.

5)09.05.01.51 գործառական դասակարգման /արտադպրոցական դաստիարակություն/ «Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 1 378 600 /մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր / ՀՀ դրամով.

6)08.01.01.52 գործառական դասակարգման /հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում / 5113 հոդվածը պակասեցնել 44 000 000 /քառասունչորս միլիոն / ՀՀ դրամով.

7)08.01.01.52 գործառական դասակարգման /հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում / 5112 հոդվածն ավելացնել 44 000 000 /քառասունչորս միլիոն / ՀՀ դրամով.

8)08.02.03.51 գործառական դասակարգման /մշակութային օբյեկտների հիմնանորոգում / 5113 հոդվածը պակասեցնել 167 000 000 /մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն/ ՀՀ դրամով.

9)01.01.01.51 գործառական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում / 5122 հոդվածն ավելացնել 88 000 000 /ութսունութ միլիոն / ՀՀ դրամով.

10)06.06.01.54 գործառական դասակարգման /բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ/ 5121 հոդվածն ավելացնել 26 000 000 /քսանվեց միլիոն / ՀՀ դրամով.

11)06.06.01.54 գործառական դասակարգման /բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ/ 5241 հոդվածն ավելացնել 50 000 000 /հիսուն միլիոն / ՀՀ դրամով.

12)06.06.01.54 գործառական դասակարգման /բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ/ 5113 հոդվածն ավելացնել 3 000 000 /երեք միլիոն / ՀՀ դրամով.

13)01.01.01.52 գործառական դասակարգման /վարչական օբյեկտների հիմնանորոգում / 5113 հոդվածը պակասեցնել 38 000 000 /երեսունութ միլիոն / ՀՀ դրամով.

14)01.01.01.52 գործառական դասակարգման /վարչական օբյեկտների հիմնանորոգում / 5121 հոդվածն ավելացնել 38 000 000 /երեսունութ միլիոն / ՀՀ դրամով.

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 251-Ն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 263-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն NN1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 264-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱԶԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐՈՍ ՀՄԱՅԱԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Գետազատ բնակավայրի Թումանյան փողոցի թիվ 16 տան բնակիչ՝ Վարոս Հմայակի Ավետիսյանի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Ք-13630 դիմումը և Գետազատ բնակավայրի վարչական ղեկավար Գարիկ Հարությունյանի 01.10.2024թ Ա-13655 զեկուցագիրը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից Հայրենական մեծ պատերազմի վետերան, մանկավարժական երկարամյա գործունեություն ունեցող 101-ամյա Վարոս Հմայակի Ավետիսյանին հատկացնել դրամական օգնություն 1 000 000 /մեկ միլիոն / ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 265-Ա/

Լսեցին

ԱՐԵՎԻԿ ԱՐԹՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.«Արտաշատ համայնքի Արևշատ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Արևիկ Արթուրի Բարսեղյանի /ծնված 17.01.2020 թվականին/ նկատմամբ սահմանել տեղական վճարների արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ՝ 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դպրոց հաճախելը:
2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 266-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 06-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 233-Լ որոշման 5-րդ հավելվածում 31-37-րդ, 5.2-րդ հավելվածում՝ 4-րդ (Ազատավան), 5.6-րդ հավելվածում՝ 2-րդ (Արաքսավան), 5.10-րդ հավելվածում՝ 1-ին (Բերդիկ), 5.15-րդ հավելվածում՝ 2-րդ (Դալար), 5.26-րդ հավելվածում՝ 2-րդ (Մրգանուշ) և 5.31-րդ հավելվածում՝ 8-րդ (Նորաշեն) տողերի ավելացմամբ կատարված փոփոխությունները Արտաշատ համայնքի կարիքների համար գույքի ձեռքբերմամբ պայմանավորված՝ ընդհանուր թվով 27 (քսանյոթ) խաղահրապարակներ (մարզասարքեր, ճոճանակներ)՝ համաձայն սույն որոշման NN1-7 հավելվածների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 267-Լ/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ ԵՐԿՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՊԱՆԹԵՈՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի հավերժացման մասին» օրենքի 2-րդ գլխի 8-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արտաշատ համայնքի թիվ երկու գերեզմանատան պանթեոնում հուղարկավորված, զոհված զինվորների ծնողների 19.09.2024թ. N Ք-13085 դիմումը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Թույլատրել կատարելու Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ երկու գերեզմանատան պանթեոնի վատթար վիճակում գտնվող զինվորական շիրիմների վերականգնում՝ գերեզմանաքարերի երեսպատում ջերմամշակում անցած ապակիով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 268-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,01087 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով և ուսումնասիրելով Ռաֆիկ Հարությունյանի 01.10.2024թ. Ք-13632 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բերդիկ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-024-0113-0037 կադաստրային ծածկագրով 0.01087 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը՝ բազմամյա տնկարկ (խաղող, 3-րդ կարգ), ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի եղանակով օտարել Արտաշատ համայնքի Բերդիկ գյուղում գտնվող՝ 03-024-0113-0036 կադաստրային ծածկագրով 0.13265 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Ռաֆիկ Հարությունյանին:

2. Հողամասի օտարման գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 53617 (հիսուներեք հազար վեց հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ:

3. Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 269-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԲԵՐՆԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 13.09.2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N:5/2000 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 42-րդ կետերով, 102-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 06-ի N 225-Ն որոշումը, 13.09.2000 թվականին ՀՀ Արարատի մարզի Դալար համայնքի ղեկավարի և <<Բերնար>> ՍՊ ընկերության (ներկայումս՝ փակ բաժնետիրական ընկերություն) միջև կնքված N:5/2000 վարձակալության պայմանագրի 8.2-րդ կետը, հաշվի առնելով Արտաշատ համայնքի ղեկավարի 16.01.2024 թվականի թիվ Ե-179 գրությունը և <<Բերնար>> ՓԲ ընկերության տնօրենի համաձայնությունը (դիմում՝ 15.03.2024թ., թիվ Տ-4186)՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Դալար գյուղական համայնքի և <<Բերնար>> ՍՊ ընկերության միջև 13.09.2000 թվականին կնքված N:5/2000 անշարժ գույքի (վկայական՝ N 0229308) վարձակալության պայմանագրի 5.1-րդ կետով սահմանված ամսական վարձավճարը՝ 40 (քառասուն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, փոփոխել՝ ամսական վարձավճար սահմանելով 194360 (մեկ հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 270-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ <<ԲԵՐՆԱՐ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 07.05.2004 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N:5/2004 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ և 42-րդ կետերով, 102-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով 07.05.2004 թվականին ՀՀ Արարատի մարզի Դալար համայնքի ղեկավարի և <<Բերնար>> ՓԲ ընկերության միջև կնքված N:5/2004 վարձակալության պայմանագրի 10.2-րդ կետը, հաշվի առնելով Արտաշատ համայնքի ղեկավարի 16.01.2024 թվականի թիվ Ե-180 գրությունը և <<Բերնար>> ՓԲ ընկերության տնօրենի առաջարկը (դիմում՝ 15.03.2024թ., թիվ S-4185)՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Դալար գյուղական համայնքի և <<Բերնար>> ՓԲ ընկերության միջև 07.05.2004 թվականին կնքված N:5/2004 անշարժ գույքի (վկայական՝ N 771634) վարձակալության պայմանագրի 7.1-րդ կետով սահմանված ամսական վարձավճարը՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, փոփոխել՝ ամսական վարձավճար սահմանելով 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 271-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 194-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գազատարներն անհատույց, անորոշ ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 194-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=2255.40մ, որից Մ/Ճ 52.49մ (32մ ստորգետնյա գազատար) d=108մմ;Ց/ճ 1144.46մ d=100մմ, 1058.45մ d=57մմ, Այգեպատ գյուղում գտնվող վերգետնյա ցածր ճնշման գազատարը հենասյուների վրա L=1291.50մ (D=89մմ -671.98մ D=76մմ- 449.12մ, D=57մմ-170.4մ), Գետազատ գյուղում գտնվող վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=1212.45մ, որից Մ/ճ 290.77մ d=76մմ , Ց/Ճ 921.68մ, d=57մմ, Բերքանուշ գյուղում գտնվող վերգետնյա գազատարը հենասյունների վրա L=625.0մ, որից Մ/Ճ 10.87մ d=108մմ, Ց/ճ 614.13մ d=76մմ, Գետազատ գյուղում գտնվող Ց/Ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=442.07մ d=57մմ, Նշավան գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=324.86մ d=57մմ, Նշավան գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=251.76մ d=57մմ, Արտաշատ քաղաքում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=197.70մ d=57մմ, Կանաչուտ գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=145.17մ d=57մմ, Նշավան գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=142.58մ d=57մմ, Կանաչուտ գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=140.68մ d=57մմ, Կանաչուտ գյուղում գտնվող Ց/ճ վերգետնյա գազատարը հենասյուների վրա L=106.25մ d=57մմ, Բերքանուշ գյուղում գտնվող 1հատ ՃԿ-160 ճնշման կայանը, Գետազատ գյուղում գտնվող 1 հատ ՊԳԿԿ-100-ը և Արտաշատ քաղաքում գտնվող 1 հատ ՊԳԿԿ-100-ը անհատույց, անորոշ ժամկետով տրամադրել «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ /ՀՎՀՀ 00046317/:»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 272-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի

մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 9-ի N 2/փ-361 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 01//05663-2024 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան գյուղում գտնվող, 03-077-0040-0096 կադաստրային ծածկագրով 0,06559հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրի գոտևորման նախագծում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 273-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի N 2/փ-373 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի N 01//05786-2024 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Մխչյան գյուղում գտնվող, 03-059-0108-0071 կադաստրային ծածկագրով 0,52հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասից ըստ կազմված հատակագծի 0,05869հա մակերեսով հատվածի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի:

2.Նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայրի գոտևորման նախագծում:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 274-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ/ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԽՈՐԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի 22 դեկտեմբերի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 9-ի N 2/փ-356 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 01//05685-2024 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան գյուղում գտնվող, 03-074-0233-0012 կադաստրային ծածկագրով 0,01416հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողերի:

2.Հաստատել՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան գյուղում գտնվող, 03-074-0237-0019 կադաստրային ծածկագրով 0,01796հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողերի:

3.Նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի գոտևորման նախագծում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 275-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ (հերթական) նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2024 թվականի նոյեմբերի 13-ին, ժամը 11:00-ին:

2.Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 276-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԻ ԱՋԱՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՇԻԿՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ

ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գոռ Նազարյանը _____